Արահետ

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

Երանի՞ ես իմանայի, ինչ ընտրել, ինչպես վարվել...



Արևի պես պայծառ ու ջերմ
Բոպեներդ խինդով լցնեմ,
Անթիվ խաղեր, պատմություններ
Հետաքրքիր և գունագեղ իմ էջերում դու կգտնես:
Եթե բացես և ինձ թերթես ընկերաբար,
Տողերում իմ դու կտեսնես նոր ճանապարհ:

Թամարա ԼԱՄԲՐԻԱՆՈՎԱ

ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐԻԿՆԵՐ

Թույլ տվեք ներկայանալ: Իմ անունն ԱՐԱՀԵՏ է: Ես շատ ուրախ եմ, որ կարող եմ ծանոթանալ ձեզ հետ: Կարծում եմ, որ մենք լավ ընկերներ կդառնանք: Դուք ինձ նամակներ կգրեք, իսկ ես ձեզ հաճախակի հյուր կգամ: Ամեն անգամ, երբ ես ձեր տուն կգամ, կզգամ ձեր ձեռքերի ջերմությունը և կլսեմ ձեր ձայները: Ես ի սրտե կուրախանամ ձեզ հետ միասին և փառք կտամ Աստծուն: Ես արդեն ունեմ մի փոքրիկ նվեր՝ բանաստեղծության տեսքով, որի համար շատ ուրախ եմ:

Նկարեց Սոնա ՄԿՐՏՉՅԱՆԸ

ԹԱՔՆԱԿԱԾ ԲԱՌԸ

Ինչպե՞ս են կոչվում այն կենդանիները, որ պատկերված են այստեղ: Հիշի՛ր նրանց անունների առաջին տառերը եւ ջնջի՛ր դրանք աղյուսակում: Մնացած տառերից դու բառ կստանաս: Ո՞ր բառն է դա:

Ձ	Հ	Վ	Լ	Ձ	Ճ	Հ	Լ	Ռ	Ձ
Լ	Ա	Ձ	Հ	Կ	Լ	Ձ	Ա	Հ	Լ
Հ	Լ	Ն	Ձ	Լ	Ու	Հ	Լ	Թ	Հ
Ձ	Յ	Հ	Լ	Ձ	Ու	Լ	Ձ	Ն	Ձ

Աղյուսակ... կազմեց
Նինա ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

Նկարեց
Վիկտորիա ԴՈՒՆԱԵՎԱՆ

«Մեծ արջին» հեծած

Ելենա ՄԻԿՈՒԼԱ

Գլուխ 1

Երեկոյան, երբ հյուրերը գնացին, Արամը նայում էր նվերները, որոնք նա ստացել էր իր ծննդյան օրվա կապակցությամբ: Նոր չմուշկներ, հեռակառավարվող ուղղաթիռ, երեք տուփ «Լեգո» կոնստրուկտոր, նոր MP3 նվագարկիչ. պարզապես անգին գանձեր: Ինչպես նաև բաժակ և մարզաշապիկ՝ «Մայնկրաֆտի» տարբերանշանով: «Դինոզավրեր» հանրագիտարան և... ինչ-որ անհասկանալի երկարավուն տուփ...

- Սա, կարծես թե, Աննան է նվիրել ինձ: Հետաքրքի՞ր է, ի՞նչ կա այստեղ, - ասաց Արամը՝ բացելով տուփը:

Պարզվեց, տուփի մեջ գլանաձև փաթաթած պայծառ և գունեղ աստղազարդ երկնքի քարտեզ էր:

- Այսպե՞ս, - արտասանեց նա՝ զննելով անսովոր նվերը:

Ընդհանրապես Արամն աստղագիտությամբ չէր հետաքրքրվում: Ճիշտն ասած, անգամ չէր սիրում այն: Բանն այն է, որ առաջին անգամ նա այդ գիտության գոյության մասին իմացել էր դեռ առաջին դասարանում:

Արամը հիշեց այն ուշ աշնանային երեկոն, երբ իր ավագ եղբայրը՝ հինգերորդ դասարանցի Գևորգը, աշխարհագրության դասից

Մեծ Արջի և Փոքր Արջի Համաստեղություններ

հետո, որի ժամանակ պատմել էին աստղազարդ երկնքի մասին, որոշել էր իր գիտելիքներով կիսվել կրտսեր եղբոր հետ: Գևորգն Արամին տարել էր պատշգամբ և սկսել էր նրան պատմել Մեծ Արջի մասին.

- Դե՛, ահա այն: Տե՛ս, նման է երկար պոչով շերեփի:

Եվ, բռնելով Արամի գլուխը, Գևորգն այն թեքել էր այդ յուրահատուկ համաստեղության կողմը:

- Ի՞նչ շերեփ, - գրեթե լացելով պատասխանել էր Արամը:

- Դե՛, այն կաթսայի նման, որի մեջ մայրիկն առավոտյան վարսակի շիլա է եփում, - համբերությունը կորցնելով պատասխանել էր Գևորգը:

Սակայն որքան էլ Արամը լարվել էր, նա այդպես էլ չէր կարողացել տեսնել ո՛չ Մեծ, ո՛չ Փոքր Արջին: Երկնքում բազմաթիվ աստղեր կային, որոնք ոչ մի կերպ կապված չէին միմյանց: Արամին փրկել էր մայրիկը, հակառակ դեպքում Գևորգը փոքր եղբոր վիզը կոլորեր՝ նրա կյանքում առաջին աստղագիտության դասի ժամանակ:

Իսկ այստեղ՝ այս քարտեզի վրա Արամն անմիջապես տեսավ չարաբաստիկ շերեփը: Քարտեզը հատակին փռելով՝ նա սկսեց կլանված զննել համաստեղությունները:

- Ահա՛ այն, Մեծ Արջը: Ահա նաև Փոքր Արջը, որը նույնպես նման է պոչով կաթսայի, բայց ավելի փոքր է: Տե՛ս է, ի՞նչ պայծառ աստղ է՝ Բևեռային աստղ: Պարզվում է, այն գտնվում է Փոքր Արջի համաստեղությունում: Ա՛յ, ահա՛, այ քեզ բա՛ն: Որսկան Շների համաստեղությունը: Իսկ սա Կարապն է: Հետաքրքիր է, էլ ի՞նչ կա այստեղ: Ահա Ընձուղտը, իսկ սա, օ՛յ չեմ կարող, ճանճը:

Նրա բացականչությունների վրա ներս վազեց մայրիկը.

- Արա՛մ, ի՞նչ է պատահել:

- Մա՛մ, տե՛ս, ինձ աստղազարդ երկնքի

քարտեզ են նվիրել: Այստեղ այնքա՜ն հետաքրքիր համաստեղություններ կան: Տե՛ս, այստեղ անգամ Պոմպ կա:

- Չի՞ կարող պատահել, - մայրը նստեց Արամի կողքին, - Եվ իրոք, Պոմպ: Իսկ ահա Մանրադիտակը... Օ՜, արդեն ուշ է, պառկիր քնելու, վաղը կուսումնասիրենք...

Արամը մաքրեց ատամներն ու պառկեց քնելու, բայց զարմանալի նվերն անընդհատ նրան հանգիստ չէր թողնում: Կամացուկ լույսը վառելով՝ նա կրկին սկսեց զննել քարտեզի համաստեղությունները: Եվ այստեղ նրա գլխում մի միտք ծագեց. իրական երկնքում գտնել դրանցից գոնե մի քանիսը: Գողտուկ խոհանոց մտնելով՝ Արամը դուրս եկավ պատշգամբ: Մութ էր, երկնքում ոչ մի աստղ չկար: Ներքևում վառվում էին լապտերները, որոնց շուրջ պարում էին արծաթե փաթիլները: Արամը հուսահատված հոգոց հանեց և գնաց քնելու:

Արամը սովորաբար գունավոր և հետաքրքիր երազներ էր տեսնում: Այդ գիշեր Արամի երազն արտասովոր պայծառ էր: Նա երազում տեսավ, թե իբր Աննան երկար պոչով կաթսայից պատշգամբից կաթ է թափում և ասում. «Տե՛ս, Արամ, սա Ծիր Կաթինն է»: Արամը նայում է. կաթը լցվում է ոչ թե ներքև, այլ վերև և վերածվում է անծայրածիր աստղային ճանապարհի: «Արա՛մ, ահա և Մեծ Արջը, - ասում է Աննան, - նստի՛ր, գնացի՜նք»: Արամը հեծնում է Մեծ Արջին, իսկ Աննան՝ Փոքրին: «Ես գտա՜ Մեծ Արջը», - բացականչում է Արամը Գևորգին, ով կանգնած է ներքևում՝ լապտերի տակ և ձեռքով է անում իրենց:

Արթնանալուն պես, Արամն անմիջապես զանգահարեց Աննային: Շնորհակալություն հայտնելով նվերի համար՝ նա պատմեց իր երազի մասին և ավելացրեց.

- Իսկ ինչ է, հիանալի կլիներ իրականում էլ թռչել աստղերի մոտ, մոտիկից ծանոթանալ նրանց հետ:

- Դե՜, թռչել չեմ խոստանում, բայց մոտիկից ծանոթանալ կարելի է, - հանելուկային արտասանեց Աննան:

- Իսկ ինչպե՞ս, - հետաքրքրությամբ հարցրեց Արամը:





- Շաբաթ օրը ես ծնողներիս հետ ամառանոց եմ գնում: Արի մեզ հետ, ես քեզ մի հետաքրքիր բան ցույց կտամ:

- Ամառանո՞ց: Բայց չէ՞ որ հիմա ձմեռ է, - կծկվեց Արամը:

- Մենք այնտեղ իսկական ցախով վառվող վառարան ունենք: Մենք միշտ Ամանորն այնտեղ ենք դիմավորում: Եղևնին մինչև հիմա բակում է՝ խաղալիքներով և փայլերով:

- Լավ, շնորհակալություն հրավերի համար: Եթե մայրիկս թույլ տա, ես հաճույքով կգամ: Իսկ դահուկներս վերցնե՞մ:

- Պետք չէ, այնտեղ ամեն բան էլ կա. և՛ դահուկներ, և՛ սահնակ, և՛... Մի խոսքով ինքդ կտեսնես, - ծիծաղեց Աննան:

- Ի՞նչ «և՛», Աննա՛: Դու միշտ այդպես ես անում. մի բան ասում ես, իսկ հետո ես հետաքրքրությունից մեռնում եմ, - բացականչեց Արամը լսափողի մեջ:

Բայց ի պատասխան նա լսեց միայն տու-տու-տու...:

Նկարեց
Վիկտորյա ԴՈՒՆԱԵՎԱՆ

Ուշադրություն: Մրցույթ:

«Ճանապարհորդություն աստղազարդ երկնքով» ստեղծագործությունը վեց գլուխներից բաղկացած փոքրիկ պատմվածք է: Ամեն գլխի վերջում տեղադրված կլինի առաջադրանք, որը դու կարող ես կատարել: Այն բանից հետո, երբ դու գրես նաև վերջին առաջադրանքի պատասխանը, ուղարկիր ինձ ԲՈԼՈՐ պատասխանները փոստով: Առաջին 20 ընթերցողները, ովքեր կուղարկեն ԲՈԼՈՐ հարցերի ճիշտ պատասխանները, *կստանան մրցանակ:*

Առաջադրանք 1

1. Ո՞ր համաստեղությունում է գտնվում Բևեռային աստղը:
2. Վերծանի՛ր Աստվածաշնչյան համարը, գրի՛ առ և սովորի՛ր անգիր:



ՀՈՒԹ ԵՎ ՈՐՓԱ

Վալդեմար ՑՈՐՆ

Հին ժամանակներում, ինչպես պատմում է Աստվածաշունչը, Իսրայելը կառավարում էին դատավորները: Աստված օգնում էր նրանց՝ Իսրայելի ժողովրդին ազատել թշնամիներից, ովքեր հարձակվում էին նրանց վրա, ինչպես նաև լուծել տարբեր կարևոր հարցեր: Սակայն ժողովուրդը չէր հնազանդվում դատավորներին, չէր վախենում Աստծուց, երկրպագում էր կուռքերին և քարե արձաններին: Այդ պատճառով Աստված երբեմն իսրայելացիներին պատժում էր երաշտով:

Այդ պատժից էլ սկսվում է այն պատմությունը, որն այսօր կպատմեմ ձեզ:



Նկարեց Լարիսա ԳՈՐՈՇԿՈՆ

Բեթլեհեմում, որը գտնվում էր Հուդայի երկրում, մի ընտանիք էր ապրում: Ամուսնու անունը Ելիմելեք էր, նրա կնոջ անունը՝ Նոյեմի, իսկ նրանց որդիներինը՝ Մաալոն և Քելլոն: Եվ Հուդայի երկրում սով եղավ: Ելիմելեքն իր կնոջ և երկու որդիների հետ մեկնեց հարևան Մովաբի երկիր: Որոշ ժամանակ անց որդիներն այնտեղ կին գտան իրենց համար: Կանանցից մեկի անունը Հռութ էր, մյուսինը՝ Որփա: Երկուսն էլ կռապաշտ էին:

Որոշ ժամանակ էլ անցավ, և Ելիմելեքը մահացավ, այնուհետ նրա երկու որդիները ևս մահացան: Նոյեմին մենակ մնաց օտար երկրում՝ կռապաշտների մեջ: Եվ նա որոշեց վերադառնալ իր երկիր՝ իր ժողովրդի մոտ: Իրերը հավաքելով՝ նա ճանապարհ ընկավ: Նրա հարսներն իր հետ գնացին: Երբ դուրս եկան քաղաքից, Նոյեմին նրանց ասաց. «Գնացե՛ք, և ձեզանից ամեն մեկն իր մոր տուն թող վերադառնա, Տերը ձեզ ողորմություն անի, ինչպես դուք եք արել մահացածներին և ինձ»:

Հարսները շատ տխրեցին, արտասվեցին և ընդհանրապես չէին ցանկանում բաժանվել սկեսուրից: Բայց, այնուամենայնիվ, նրանցից մեկը՝ Որփան հրաժեշտ տվեց և գնաց: Նոյեմին Հռութին ասաց. «Ահա, քո հարսը վերադարձավ իր ժողովրդի և իր աստվածների մոտ, դու ևս վերադարձի՛ր...»: «Ինձ մի՛ ստիպիր, որ քեզ թողնեմ, - պատասխանեց Հռութը, - ուր որ դու գնաս, այնտեղ էլ ես եմ գնալու, որտեղ որ դու ապրես, այնտեղ էլ ես պիտի ապրեմ, քո ժողովուրդն իմ ժողովուրդը կլինի, և քո Աստվածն՝ իմ Աստվածը»:

Նոյեմին տեսավ, որ Հռութը հաստատ որոշել է իր հետ գնալ և դադարեց նրան համոզել: Եվ այդպես նրանք քայլում էին առաջ, մինչև հասան Բեթլեհեմ քաղաք, որտեղից շատ տարիներ առաջ Նոյեմին և իր ամուսինը իրենց որդիների հետ մեկնել էին օտար երկիր: Նոյեմիի հայտնվելուն պես ողջ քաղաքն իրար անցավ: «Դա Նոյեմին է, - ասում էին մարդիկ, - Նոյեմին վերադարձել է»:

Նոյեմին ոչինչ չուներ, որ կարողանար տալ հարսին: Այրին բոլորովին աղքատացել էր: Սակայն իսրայելացիների օրենքներից մեկն աղքատներին ու սովածներին իրավունք էր տալիս հունձքի ժամանակ արտերից հավաքելու հնձվորների թողած հասկերը: Այդ պատճառով Հռութը ստիպված եղավ գնալ հարուստների արտերը և հավաքել հասկերը՝ հնձվորներից հետո: Բարեբախտաբար հենց գարու հունձքի ժամանակն էր:

«Ո՞վ է այս երիտասարդ կինը», - հարցրեց դաշտի տերն իր հնձվորներին, որ կեսօրին եկել էր դաշտ՝ տեսնելու, թե ինչպես է ընթանում աշխատանքը: «Նա մովաբուհի Հռութն է՝ Նոյեմիի հարսը», - պատասխանեցին նրանք տիրոջը: «Նրան ավելի շատ հասկեր թողեք, - կարգադրեց Բոոսը. այդպես էր արտի տիրոջ անունը:

- Անգամ խրձերից կարող եք վերցնել և թողնել նրան, որպեսզի նա դատարկաձեռն տուն չգնա»: Բոոսը Նոյեմիի հեռու ազգականն էր: Նա լսել էր, թե որքան բարի էր գտնվել Հռութն իր սկեսրոջ հանդեպ:

Մի խոսքով, Բոոսին դուր եկավ երիտասարդ այրի Հռութը: Նրանք սիրեցին միմյանց և շուտով հարսանիք արեցին՝ Իսրայելի ժողովրդի բոլոր սովորույթների և օրենքների համաձայն: Այսպես մովաբուհի Հռութը ձեռք բերեց հայրենիք, ընտանիք և Աստված, որովհետև Իսրայելի Աստվածը, Նոյեմիի Աստվածը դարձավ նաև նրա Աստվածը:

Ինչ ես կարծում:

1. Ո՞վ էր կառավարում Իսրայելը, երբ այն դեռ թագավորներ չուներ:
2. Ինչպե՞ս էր կոչվում այն երկիրը, ուր գնացին ապրելու Ելիմելեքն ու նրա ընտանիքը սովի ժամանակ:
3. Ինչ ես կարծում, ինչու՞ Աստված այդպես օրհնեց Հռութին:

Աստվածաշնչում մի փոքրիկ գիրք կա, որ վերնագրված է նրա անունով: Գտի՛ր այն եւ կարդա՛: Դա շատ հետաքրքիր գիրք է:

ԵՂԻՐ ՎՃՌԱԿԱՆ

Երբ ես դեռ երեխա էի, մայրիկս երբեմն ինձ իր հետ տանում էր աշխատանքի: Նա երկաթուղային ճանապարհների սլաքավարուհի էր: Հեռավոր տափաստանում *(այդ ժամանակ մենք ապրում էինք Ղազախստանում)* երկաթուղին բաժանվում էր երկու ճանապարհի, կամ երկու ճանապարհները միավորվում էին մեկում: Նման վայրերում սլաքավարների կրպակներ կային: Երբ նրանց զանգահարում էին կենտրոնական կայարանից, նրանք դուրս էին գալիս և տեղափոխում էին սլաքը: Եվ կախված նրանից, թե որ կողմ էր ցույց տալիս սլաքը, գնացքը գնում էր այս կամ այն ուղղությամբ:

Հիմա դա արվում է մեքենայացված կերպով: Հրահանգները գալիս են համակարգչից: Իսկ այն հեռավոր ժամանակներում ամեն բան կախված էր հեռախոսազանգերից և սլաքավարների աշխատանքից: Եվ ահա մայրիկը կտեղափոխի սլաքը և գնացքը կգնա ոչ թե Ալմա-Աթա, այլ՝ Նովոսիբիրսկ: Ընդամենը մեկ փոքրիկ շարժում, սլաքի «փետուրի» հազիվ տեսանելի տեղաշարժ և ողջ կազմը կգնա բացարձակապես այլ ուղղությամբ: Դա ինձ վրա միշտ ուժեղ տպավորություն էր գործում:

Մեզ հետ կատարվող շատ բաներ կախված են մեր որոշումներից: Թվում է, թե երբեմն ոչ այնքան կարևոր որոշումներից: Սակայն դրանք հաճախ հեռուն գնացող հետևանքներ են ունենում: Քեզ առաջարկել են ծխել: Մի կողմից ցանկանում ես մեծ լինել և մյուսների մոտ թուլակամ մարդու տպավորություն չթողնել: Մյուս կողմից, դու գիտես, որ դա վնասակար է առողջության համար և կախվածություն է առաջացնում: Այդ պատճառով ավելի լավ է հրաժարվել, քան թուլություն ցուցաբերել և ենթարկվել ընկերների կամ ընկերուհիների ճնշումներին: Նույնը նաև խմիչքի կամ այլ, ոչ պակաս վտանգավոր, հարցերում: Ավելի ճիշտ է միանգամից ասել «ո՛չ»:

Իսկ երբեմն, հատկապես ծառայության ժամանակ կամ երեկոյան, երբ մայրիկը կամ հայրիկը քեզ համար աստվածաշնչյան պատմություններ են կարդում կամ ինչ-որ կարևոր և հետաքրքիր բան են պատմում, դու ցանկանում ես Աստծուց ներողություն խնդրել, կամ անգամ Նրան նվիրել քո կյանքը: Թվում է, թե ոչ մի արտասովոր բան չկա, սովորական երեկո է: Բայց ամեն դեպքում որոշումը քոնն է, եթե դու այն կայացնես, նշանակություն կունենա անգամ հավիտենության մեջ: Հիսուսն Անձամբ է ասել, որ նա, ով կընդունի Իրեն, հավիտենական կյանք ունի և չի դատապարտվի:

Ճիշտ այնպես, ինչպես Հռութի և Որփայի մասին պատմող աստվածաշնչյան պատմության մեջ: Որփան վերադարձավ իր ընկերների և կուռքերի մոտ: Իսկ Հռութը որոշեց ապրել Աստծո ժողովրդի հետ և պատկանել Նրան: Հիշու՞մ ես, թե ինչպես ավարտվեց Հռութի պատմությունը: Հռութն ամուսնացավ Բոոսի հետ: Ծնվեց նրանց որդի Ովբեդը: Դա մեծ ուրախություն էր: Երբ Ովբեդը մեծացավ նա ևս որդի ունեցավ, ում անունը Հեսսե էր, իսկ նրա որդու անունը՝ Դավիթ: Աստված Դավթին խոստացավ նրա սերունդներից մեզ Փրկիչ պարգևել և Նա կատարեց Իր խոստումը: Այդ Փրկիչը Հիսուս Քրիստոսն է:

Քո կյանքը ևս իմաստ կստանա, եթե որոշես այն Աստծուն նվիրել:

Վալդեմար ՅՈՐՆ

Էդուարդ ՍԿԱՉԿՈՎ

ՍԻՐՏԴ ՏՈՒՐ ՏԻՐՈՋԸ

Սիրտդ տու՛ր Տիրոջը,
Տու՛ր ամբողջությամբ
Եվ ուրախ երգերով
Փա՛ռք երգիր Նրան:

Զգացմունքներդ տու՛ր Տիրոջը,
Նրանց թռիչքն հիասքանչ
Եվ հավատքով իրական
Զգտի՛ր միայն առաջ:

Միտքդ տու՛ր Տիրոջը
Եվ քո կյանքն ամբողջ,
Եվ հիշի՛ր, անկասկած,
Կլինես դրախտում:

Հեղինակը հայտնի չէ

ՊԻՏԻ ՀԱՎԱՏԱՆՔ

Թեև շատ ենք դեռ փոքրիկ,
Բայց ուզում ենք ծառայել
Մեր Տեր Հիսուսին,
Մենք Իրեն անկեղծ սիրում ենք
Եվ Նրա հետ կլինենք
Հավետ երկնքում:

Գուցե կյանքում հանդիպենք
Վատ ու չար մարդկանց,
Ովքեր մեզ կհամոզեն,
Թե Աստված չկա,
Կամ փոքրիկների համար չէ
Հավատքն իրական:

Բայց մենք պիտի հավատանք
Աստծո ամեն մի խոսքին.
Նա՝ երկնքի դռները բաց
Իր մոտ է կանչում մանկանց:

Նկարեց Տատյանա ԿՈՍՏԵՅԿԱՅԱՆ

Իսկ դու գիտե՞ն,
որ Նոր Գվինեայի անտառներում բնակվող փայտային կենգուրուները հիմնականում ապրում են ծառերի վրա եւ կարող են մի ծառից մյուսը թռչել 9մ հեռավորությունից, իսկ գետնին՝ 18մ բարձրությունից:

ՀԱՂԹԱՆԱԿ ԳՈՂԻԱԹԻ ՀԱՆԴԵՊ

Նատալիա ԲԵՐԳԵՐ

Հայկը, սեղանի մոտ նստած, Աստվածաշնչում կարդում էր Դավթի և Գողիաթի մասին պատմությունը: Ա՛յ սա ուրիշ բան: Պատանի հովիվը մի քարով սպանեց հզոր դյուցազնին: Տղան ընդդեմ երկաթի և մկանների սարի: Հասկանալի է, որ նա չէր կարողանա այդ անել միայնակ՝ առանց Աստծո օգնության: Բայց չէ՞ որ Դավիթը չվախեցավ...

- Հայրի՛կ, - ասաց Հայկը հենց նոր ներս մտած հորը, - երևի Դավիթը յուրահատուկ էր: Աստված միայն նրան էր նման քաջություն տվել:

Հայրը ժպտաց:

- Չէ՛, իրոք հայրիկ: Տես, ես թեկուզ և հավատում եմ Հիսուսին, բայց միևնույն է վախենում եմ հարևան Քոթոթ Արմանից: Նա բոլորին ծեծում է...

- Բայց ինչու՞ է նա բոլորին ծեծում:

- Չգիտեմ: Նա ինչ-որ չար է... Այն օրվանից, ինչ մենք տեղափոխվել ենք այստեղ *(արդեն երկրորդ ամիսն է)*, ես միայն այն եմ լսում, թե ինչպես են բոլոր տղաներն ասում , որ նա շատ ուժեղ է, հսկայական բռունցքներ ունի և բոլորին ծեծում է:

- Ծեծում է նրանց, ովքեր իրենից վախենու՞մ են:

Հայկը հոգոց հանեց և կախեց գլուխը: Հայրը փաղաքշանքով խառնեց որդու մազերը և հայացք գցեց Աստվածաշնչին, որ բացված էր այն էջի վրա, որտեղ պատմվում է, թե ինչպես Դավիթը հաղթանակ տոնեց և փառավորեց Աստծուն:

- Գիտես, իսկ ես, թերևս, կարող եմ քեզ մի գաղտնիք բացատրել: Ինձ թվում է, երբ դու կարդում էիր այդ պատմությունը, քեզ պատկերացնում էիր Դավթի դերում, իսկ Գողիաթի դերը քո երևակայության մեջ կատարում էր «ժողովրդական արտիստ և ատլետ» Արման Քոթոյանը:

- Իսկ դու ինչպե՞ս հասկացար, հայրի՛կ:

- Շատ պարզ: Դրանում ոչ մի հատուկ իմաստություն չկա: Միայն թե դու դերերը ճիշտ չես բաշխել: Գողիաթը Արմանը չէ, այլ քո սեփական վախը:

- Այդ ինչպե՞ս, - զարմացավ Հայկը:

Հայրը սենյակում քայլելով ասաց.

- Դե, տե՛ս. այ Արմանը կփոխվի, կդառնա լավը: Իսկ քո վախը կմնա միշտ քո մեջ: Հետո կգա մեկ այլ ուժեղ և հսկա տղա, օրինակ՝ Վահան Աժդահան, և դու նրանից ևս կվախենաս, ինչպես առաջ վախենում էիր Քոթոթ Արմանից: Հասկանալի՞ է:

Այո, հասկացա: Միայն թե... Արմանն ինչպե՞ս կարող է փոխվել: Բոլորն ասում են, որ նա անուղղելի է:

- Իսկ դու մոռացե՞լ ես, որ Հիսուսը կարող է փոխել յուրաքանչյուրին: Պատմի՛ր Արմանին Աստծո մասին:

- Ո՛չ, - Հայկի աչքերում վախ փայլատակեց, - ես տղաներին պատմեցի և նրանք սկսեցին ինձ բարկացնել «կրոնավոր» ու «պապ» ասելով: Իսկ եթե Արմանին ասեմ, նա ինձ կծեծի:

Պատասխանի փոխարեն հայրը վերցրեց Աստվածաշունչը, մի քիչ թերթեց և կարդաց.

- «Տերն է իմ լույսը և իմ փրկությունը. ես ումի՞ց պիտի վախենամ: Տերն է իմ կյանքի զորությունը, ես ումի՞ց պիտի սարսափեմ»: Այդ տղան Աստծո սիրո կարիքն ունի, նա քիչ է բարիք տեսել...

Այդ պահին բակից աղմուկ և բղավոցներ լսվեցին: Հայկն ու հայրիկը պատուհանից նայեցին: Բակի մեջտեղում, մի մեծ փայտի հենված, կանգնած էր Արմանը՝ շրջապատված մարտական տրամադրված տասնյակ տղաներով:

- Ի՞նչ է պատահել, - հարցրեց հայրիկը Հայկին:

- Հասկանում ես, երեխաներին հոգնեցրել է, որ Արմանն այսքան կռվարար է, և նրանք որոշել են ամբողջ բակով նրան դնգստել: Ես հրաժարվեցի, և հիմա ոչ ոք ինձ հետ չի խոսում: Վա՜յ, հայրի՛կ, նայի՛ր:

Արմանը, չարամիտ քմծիծաղ տալով, վերցրեց փայտը և այն բարձրացրեց գլխից վեր.

- Այ վախկոտնե՛ր, արագ փախեք այստեղից:

«Վախկոտներին» ասես քամին փչեց, և նրանք հեռվում կանգնած ծուլորեն սկսեցին հայհոյել Արմանին:

- Դե ինչ, ուզու՞մ եք ուժերդ չափել, - քմծիծաղ տվեց Արմանը, - դե հերթով եկեք: Ո՞վ է առաջինը:

Ցանկացողներ չգտնվեցին: Հայկը հանկարծ շրջվեց ու վազեց դեպի դուրս: Հայրը ձայն տվեց նրան.

- Այդ ու՞ր, տղա՛ս:

Տղան կանգնեց և լրջորեն ասաց.

- Ես ուզում եմ հաղթել Գողիաթին:

Եվ վազեց բակ: Որքան նա մոտենում էր Արմանին, այնքան ավելի դանդաղ էր քայլում: Վերջապես Արմանն ուշադրություն դարձրեց իրեն մոտեցող նիհարիկ տղային: Նրա մեջ ինչ-որ բան զգաստացրեց Արմանին: Եվ այդ ինչ-որ բանն անսովոր և տարօրինակ էր: Տղան հանգիստ իրեն էր մոտենում և վախից չէր դողում: Հոնքերը շարժելով Արմանը հարցրեց.

- Դու ի՞նչ է, ինձանից չե՞ս վախենում:

- Ոչ, - ժպտաց Հայկը:

Հա՜հ, գուցե դու կարատեով ես զբաղվում և կմրցե՞ս ինձ հետ:

- Ես չեմ ցանկանում քեզ հետ կռվել, - ասաց Հայկը, - և չեմ էլ կարող:

- Իսկ գուցե դու չգիտե՞ս, թե ով եմ ես: Ես հիացմունքի եմ արժանի: Ես քաղաքի սարսափն եմ, ամենաուժեղն ու ամենաքաջը: Ինձանից բոլորը վախենում են, ինձ հավասարը չկա:

- Ես գիտեմ թե դու ով ես, Արմա՛ն: Դու խղճահարության ու կարեկցանքի ես արժանի: Դու մեր քաղաքի ամենամիայնակ և դժբախտ տղան ես: Բոլորը քեզանից վախենում են և դու ընկերներ չունես: Ինչ-որ ժամանակ քեզ մեծ ցավ են պատճառել, բայց դու, փոխանակ մոտիկ ընկեր գտնելու և նրա հետ կիսվելու, սկսել ես բոլորին վանել քեզանից և քո վիճակն ավելի է վատացել: Չէ՞ որ քեզ չեն ուրախացնում քո «հերոսությունները»:

- Դու որտեղի՞ց գիտես այդ ամենը: Քեզ ո՞վ է պատմել, - թշնամաբար արձագանքեց Արմանը:

- Ես կարող եմ քեզ տեղեկացնել, թե ինչ է Նրա անունը, - ասաց Հայկը:

- Ո՞ւմ:

- Նրա, Ով քեզ շատ է սիրում:

Արմանի բռունցքները սեղմվեցին, աչքերը կատաղությունից փոքրացան, և նա բղավեց.

- Սու՛տ է: Ինձ ոչ ոք չի սիրում: Ինձ բոլորն ատում են. և՛ խորթ մայրս, և՛ հարևանները, և՛ տղաները: Հայրս էլ էր ինձ ատում. միշտ ծեծում էր, երբ հարբած էր լինում: Բայց ասում էր, թե սիրում է ինձ: Հետո վերցրեց ու մահացավ և ինձ մենակ թողեց: Իսկ ինձ խաբելու համար ես քեզ հիմա կծեծեմ:

Սակայն նա ոչ մի քայլ չէր կարողանում անել դեպի Հայկը, ով հանգիստ կանգնած էր և չէր վախենում Արմանից, այլ նրան էր նայում ինչ-որ տարօրինակ հայացքով, ոչ մանկական, բարի հայացքով: Արմանի բռունցքներն իրենք իրենց թուլացան:

Հայկը կամաց և հստակ ասաց.

- Հիսուսը սիրում է քեզ, և ես եմ սիրում քեզ, իսկ դա արդեն երկուսն են...

Դա արդեն չափազանց էր Արմանի համար: Ավելի լավ կլիներ, եթե Հայկը կռվեր նրա հետ կամ հարվածեր: Ինչ-որ ծակծկող և տաք բան գլորվեց կոկորդով, քիթը վեր քաշեց, աչքերը տաքացան ու թրջվեցին և Արմանը՝ ետ շրջվելով փախավ:

Հայկը նրան գտավ փոշոտ տախտակե ցախանոցում, որտեղ Արմանը սովորաբար մարզվում էր՝ ձեռքերով և ոտքերով դնգստելով առաստաղից կախված բոքսի տանձիկին: Հիմա նա նստած էր տուփի վրա՝ լուռ ու ինչ-որ շատ հոգնած: Հայկը մոտեցավ Արմանին և, ուղիղ նրա աչքերին նայելով, ասաց.

- Գնանք մեր տուն, ես շատ բան եմ ցանկանում քեզ պատմել: Արմանը մի պահ մտածեց, ապա շունչ քաշեց, արցունքները բռունցքով քսեց կեղտոտ երեսին և ձեռքը մեկնեց Հայկին:

Նկարեց Ելենա ՄԻԽԱՅԼՈՎԱ-ՌՈԴԻՆԱՆ

ԿԱՐԴԱ՛ ՀԱՄԱՐԸ

Տեղափոխի՛ր տառերն ապաս վանդակներ եւ դու կկարդաս աստվածաշնչյան բառեր, որոնք քեզ կօգնեն ապասվել վախից:



Կազմեց
Նատալյա ԲԵՐԳԵՐԸ

ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

Իսկ դու գիտե՞ս, թե որ կենդանին է հիշատակվում թվարկված աստվածաշնչյան հերոսներից յուրաքանչյուրի կյանքի նկարագրության մեջ:

Սլաքներով ցույց տուր յուրաքանչյուր մարդու անունից անհրաժեշտ կենդանուն:

1	Բաղաամ	ոչխար
2	Դանիել	կետ
3	Դավիթ	աղավնի
4	Եղիսե	աղվես
5	Եղիա	օձ
6	Հովհաննես մկրտիչ	արջ
7	Հովնան	առյուծ
8	Նոյ	ավանակ
9	Պողոս	ագռավ
10	Սամսոն	մորեղ

ԳՈՒՇԱԿԻ՛Ր

Ո՞ր աստվածաշնչյան պատմությունն է պատկերված այստեղ:

Դու նույնպես փորձիր այն նկարել՝ առանց մատիտը թղթից կտրելու:

Նկարեց Էմմա ՆԻԿԵԼԸ

ՀԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՎ

Կազմեցին
Լյուբա և Տանյա ԳԵՅՆՈՎԻՉՆԵՐԸ

Հորիզոնական.

1. Ո՞վ էր մեղադրում Աստծուն Իր բարեսրտության համար *(Հովն.4:1-2):*
3. Ու՞մ էր կանչում Աստված գիշերը տաճարում *(Ա Թագ.3:1-8):*
5. Ո՞վ մատնեց Հիսուսին *(Հովհ.18:1-5):*
13. Ո՞ր երկիր փախան Հովսեփն ու Մարիամը Նորածնի հետ *(Մատթ.2:13):*
14. Ի՞նչ էր Մարթայի և Մարիամի եղբոր անունը *(Հովհ.11:1-3):*
16. Ո՞վ բարձրացավ ծառը Հիսուսին տեսնելու համար *(Ղուկ.19:2-4):*
18. Ի՞նչ պետք է ունենա քրիստոնյան *(Գաղ.5:22):*

Ուղղահայաց.

2. Ի՞նչ էր այն մարդու անունը, ում թագադրեցին կաղնու մոտ *(Դատ.9:6):*
4. Ո՞ր սարի վրա կանգ առավ տապանը ջրհեղեղից հետո *(Ծննդ.8:4):*
6. Ի՞նչ էր Հովհաննես Մկրտչի հոր անունը *(Ղուկ.3:2):*
7. Ո՞վ դարձավ Մովսեսի հետնորդը *(Թվ.27:12-23):*
8. Ու՞մ բժշկեց Հիսուսը Երիքովի ճանապարհին *(Մարկ.10:46-52):*
9. Ի՞նչ էր այն թագուհու անունը, ով ծոմ էր պահում երեք օր և երեք գիշեր *(Եսթ.4:15-16):*
10. Ի՞նչ բարձրագույն պարգև է սպասվում Երկնային Արքայությունում Աստծուն հավատարիմ մարդկանց *(Հայտն.2:10):*
11. Ի՞նչ էր նախահայր Հակոբի կրտսեր որդու անունը *(Ծննդ.42:3-4, 13):*
12. Ո՞վ խնայեց իր թշնամու կյանքը քարայրում *(Ա Թագ.24:1-12):*
15. Ո՞ր սարը բարձրացան Բարակն ու իր զորքը Սիսարայի հետ մարտից առաջ *(Դատ.4:10-12):*
17. Ի՞նչ էր այն արքայի անունը, ով պոետ էր, բուսաբան և կենդանաբան *(Գ Թագ.4:30-33):*

Իսկ դու գիտե՞ս,
որ խլուրդը մեկ գիշերում կարող է փորել 76մ երկարությամբ թունել:

Նկարեց Լարիսա ԳՈՐՈՇԿՈՆ



Բարեպաշտ Նոյը

Աստվածաշնչում գրված է, որ Աստված ջրհեղեղ ուղարկեց երկրի վրա, որովհետև մարդիկ չար էին: Հին Միջագետքի գտածոների վրա հիմնված այս պատկերազարդումը ներկայացնում է բարեպաշտ Նոյին, ով հոգում է իրեն և իր ընտանիքին կերակրելու մասին: Նոյին շրջապատում են ոչ այնքան սիրալիր մարդիկ. ամենուր տիրում է հարբեցողություն, չարիք և բռնություն:

Կենդանիների կաշվով պատված հյուսված նավակները կոչվում են գուֆա: Գտի՛ր գուֆան՝ դրա մեջ եղած կենդանիներով:

Գտի՛ր խմիչքով լի սափորը, որից մարդիկ խմում են ցողունների միջոցով:

Զինվորները կրում էին կաշվե սաղավարտներ և մորթե վերարկուներ: Գտի՛ր 8 զինվորներին:

Նոյը ձյութում է նավակը, որպեսզի դրա մեջ ջուր չլցվի: Դու նրան տեսնու՞մ ես:

Վայրի գազանները վտանգ էին ներկայացնում հոտի համար: Առանձնահատուկ վախ էին ներշնչում առյուծները: Գտի՛ր առյուծին:

Գյուղացիներն աճեցնում էին գարի և այլ հացաբույսեր: Քանի՞ բերք հավաքող ես տեսնում դու հունձքի ժամանակ:

Նոյի կինը ցորեն է աղում հասարակ ջրաղացում: Որտե՞ղ է նա:

Ամենասուրը բրոնզե զենքն էր: Գտի՛ր կացինը:

Կառքեր ունենում էին միայն հարուստ մարդիկ: Գտի՛ր կառքին նստած զինվորին, ով վատ է վարվում աղքատների հետ:

Որսի ժամանակ մարդիկ նետ ու աղեղ էին օգտագործում: Գտի՛ր որսորդներին:

Երեխաները լողալիս օգտագործում էին կենդանիների կաշվից պատրաստված պահպանիչ միջոցներ: Գտի՛ր ձուկ որսացող տղային:

Նկարեց Փիթեր ՔԵՆԹԸ

Գետը ամենակարևոր ջրի աղբյուրն էր: Արդյո՞ք տեսնում ես, թե որտեղ են Նոյի հարսները լվանում սպիտակեղենը:

Նոյի կնոջը հաց թխելու համար ջուր է անհրաժեշտ: Հարսներից մեկը նրան ջուր է տանում: Դու նրան տեսնու՞մ ես:

Չիթենիները տնկում էին այն պատճառով, որ դրանց պտուղները համեղ յուղ են պարունակում: Գտի՛ր ձիթապտղի քամիչը:

Ուր քաղաքի թագավորական խաղ համարվում էր սեղանի խաղը: Պատկերազարդման մեջ որտե՞ղ են այն խաղում:

Մարդիկ այծ էին պահում, որովհետև նրանց քիչ կեր է հարկավոր և գրեթե ամեն ինչ ուտում են: Գտի՛ր Նոյի երեք որդիներին, ովքեր այծերին են արածեցնում:

Ոչխարները արածում էին գետի մոտ, որը հաճախ դուրս էր գալիս ափերից: Գտի՛ր 5 ջրամբարները՝ գետի մոտակայքում:



Հեսբա Ստրետտոն

1832–1911

19-րդ դարի երկրորդ կեսի անգլիացի հայտնի գրող

Մանկությունը

Շուրջ երկու հարյուր տարի առաջ անգլիական Վելլինգտոն փոքրիկ քաղաքում ապրում էր Սառա Սմիթ անունով մի աղջիկ: Նրա մայրիկը մահացել էր, երբ Սառան դեռ ութ տարեկան էր: Սառան երկու ավագ քույր ուներ և երկու կրտսեր եղբայր: Նրա հայրիկը կրթված մարդ էր, ուներ տպագրատուն և գրախանութ:

Մայրիկը հասցրել էր իր երեխաներին սովորեցնել Աստծուն սիրել և աղոթել Նրան, հասցրել էր նրանց հոգում հավատի փոքրիկ կրակ վառել: Ժամանակի ընթացքում Սառայի սրտում այդ կրակը վերածվել էր մեծ խարույկի. Աստծուն և թշվառ մարդկանց ծառայելու ցանկության:

Ստեղծագործական գործունեության սկիզբը

Սառան բոլոր երեխաների նման գնում էր դպրոց, օգնում էր տնային գործերում, իսկ ազատ ժամանակ հորինում և իր եղբայրներին ու քույրերին տարբեր պատմություններ էր պատմում: Աղջնակը շատ էր սիրում կարդալ: Նա կարող էր ժամերով նստել հայրիկի խանութում՝ թերթելով մեկ այս գիրքը, մեկ՝ այն: Սիրում էր լսել հայրիկի զրույցները հայտնի գրողների հետ, ովքեր հաճախ էին հյուրընկալվում իրենց տանը: Սառան անգամ չէր երազում այն մասին, որ մի օր ինքն էլ հայտնի հեղինակ կդառնա:

Դեռ դպրոցում նա սկսել էր փոքրիկ պատմվածքներ գրել և անգամ գրական կեղծանուն էր մտածել իր համար. Հեսբա *(հապավում իր եղբայրների և քույրերի անունների առաջին տառերով)*: Սակայն նա չէր համարձակվում որևէ օտար մարդու ցույց տալ իր ստեղծագործությունները:

Նրա քույրը՝ Էլիզաբեթը մի անգամ քրոջ գրած իր ամենասիրելի պատմվածքի ձեռագիրը գաղտնի ուղարկեց ժամանակի հռչակավոր անգլիացի գրող Չարլզ Դիկենսին: Մի քանի օր անց եկավ պատասխանը. Դիկենսը, ով «Տնային ընթերցանություն» ամսագրի խմբագիրն էր, պատմվածքը հրատարակել էր ամսագրում և այն ժամանակների համար բավականին մեծ հոնորար էր ուղարկել՝ հինգ ֆունտ, ինչպես նաև հեղինակին առաջարկել էր հետագա համագործակցություն: Դա 1859 թվականին էր: Այդ օրվանից ամսագրի գրեթե ամեն համարում տպագրվում էին Հեսբա Ստրետտոնի ստեղծագործությունները: Սակայն այդ նորավեպերը նրան համաշխարհային հռչակ չբերեցին:

Դեռ մանկուց Սառան երազում էր ծառայել Աստծուն և Նրան փառավորել: «Ես ինչո՞վ կարող եմ ծառայել իմ Փրկչին: Ես ի՞նչ եմ կարողանում անել, - մտածում էր նա, - միայն հետաքրքիր պատմություններ պատմել... Դե ինչ, այդ դեպքում իմ յուրաքանչյուր ստեղծագործությունը կգրեմ այնպես, որ մարդիկ ցանկանան ճանաչել Աստծուն»: Եվ նա որոշեց գրել մի պատմություն լոնդոնյան արվարձանից մի աղքատ, որբ աղջնակի մասին, ով երբեք չէր եղել եկեղեցում և չէր լսել Աստծո մասին, և ծեր պարոն Դանիելի մասին, ով ամեն օր մաքրում էր լոնդոնյան ամենագեղեցիկ եկեղեցիներից մեկը և լսում լոնդոնյան ամենահայտնի քարոզիչին, սակայն, չնայած դրան, երբեք չէր մտածել Աստծո մասին: Մի անգամ նրանք հանդիպեցին: Պարոն Դանիելը մի քանի անգամ կերակրեց քաղցած Ջեսսիկային, ով անձրևի տակ թափառում էր փողոցներում: Իսկ աղջնակը, եկեղեցում լսելով Աստծո խոսքը, ցանկացավ աղոթել սովորել, իսկ սովորելուն

պես, փրկության ուրախությունը կիսեց իր ընկերոջ հետ: Այդպես երկուսն էլ գտան Աստծուն...

Մի անգամ առավոտյան «Կիրակի տանը» հայտնի շաբաթաթերթի խմբագիրը կոշտ թղթով փաթաթված մի կապոց ստացավ: Դա Հեսբա Ստրետտոնի առաջին վիպակն էր՝ «Ջեսսիկայի առաջին աղոթքը» վերնագրով: «Կարծում եմ, ընթերցողները կհավանեն», - մտածեց խմբագիրը՝ կարդալով վերջին էջը: Թերթում հրատարակելու համար նա ստեղծագործությունը բաժանեց մի քանի մասի: Եվ խմբագրությունը հեղեղվեց շնորհակալ ընթերցողների նամակներով: Եվ 1866 թվականի հունիսին «Ջեսսիկայի առաջին աղոթքը» լույս տեսավ որպես առանձին գիրք: Այդ վիպակը մեծ հաջողություն ունեցավ. մի քանի ամսում վաճառվեց կես միլիոն օրինակ:

Գրական ժառանգություն

1866 թվականից, քառասուն տարի Հեսբա Ստրետտոնը համագործակցում էր կրոնական գրականության Ընկերակցության հետ: Այդ ընթացքում լույս են տեսել գրողի ավելի քան հիսուն գրքեր՝ մեծամասամբ քրիստոնեական պատմվածքների և վիպակների ժողովածուներ փոքրիկների համար: Դրանցից ամենահայտնիները՝ «Փոքրիկ Մեգգիի երեխաները», «Չկա մի տեղ, որ նման է տան», «Միայնակ Լոնդոնում», մինչ այժմ հաջողություն են վայելում և սիրված են ընթերցողի կողմից:

Հեսբա Ստրետտոնը գրում էր ոչ միայն Աստծուն տանող ճանապարհի և հավատքի առաջին քայլերի մասին: Նրա պատմություններից շատերը պատմում են աղքատների կյանքի մասին, որբերի և անապաստան երեխաների հոգսերի ու խնդիրների մասին: Հիշելով, թե որքան դժվար և տխուր էր մեծանալ առանց մայրիկի, թեև ինքն ուներ ընտանիք և ոչնչի կարիք չէր զգում, Հեսբա Ստրետտոնը ջանում էր հանրության ուշադրությունը սևեռել թշվառների ճակատագրերի վրա և մարդկանց գթասրտության մղել: Բարոնուհի Բարդետ - Կոտի հետ նա հիմնեց երեխաների հանդեպ դաժանության դեմ պայքարի Ազգային ընկերակցությունը:

Հեսբա Ստրետտոնը շատ էր սիրում ճանապարհորդել, մի քանի անգամ նրան հաջողվել է շրջել Եվրոպայով, բայց նրա գրքերն ավելի հեռավոր ճամփորդություններ են կատարել: Դրանք թարգմանվել են տասնյակ լեզուներով, տպագրվել են Բրայլյան գրերով՝ կույրերի համար, իսկ «Ջեսսիկայի առաջին աղոթքը» թարգմանվել է անգամ ճապոներեն: Այդ գիրքը հատուկ ճակատագրի է արժանացել Ռուսական կայսրությունում. ընթերցելիս կայսր Ալեքսանդր 2-րդն այնքան է հուզվել, որ անձամբ հոգալով վիպակի թարգմանության և հրատարակման համար՝ հրամայել է այն ուղարկել Ռուսաստանի բոլոր դպրոցներին:

Ահա այսպիսի իրական պատմություն մի աղջնակի մասին, ով սիրում էր պատմություններ պատմել և երազում էր Աստծուն փառավորել:

Ուղարկեց Հոյա ԺՈՒԿԸ

Անգլիական հրատարակության կազմը եւ նկարազարդումը 1867թ.

Ռուսական հրատարակության կազմը եւ նկարազարդումը 1893թ.

Նկարեց Եկատերինա ՊՐԱՎԴՈՒԽԻՆԱՆ

Նկարեց Եկատերինա ՊՐԱՎԴՈՒԽԻՆԱՆ

ԳԵՍԱՎՈՐ ԻՇՈՒԿԸ

Պաուլ ՈՒԱՅԹ

- Դաուդի՛, - ասաց Թալին, - մենք չգիտենք, ինչ անել: Մենք շրջանի բոլոր մարդկանց ասում ենք, որպեսզի գան պատվաստումներ անելու: Նրանցից շատերը պատասխանում են, որ գուցե գան...

- Բայց կան այնպիսիք, - ավելացրեց Կալին, - ովքեր անընդհատ այդ կարևոր գործը հետաձգում են: Նրանք չեն կարողանում վճռել...

- Եվ ես անգամ գիտեմ, թե արդյունքում նրանց ինչ է պատահելու, - տխուր նկատեց Դաուդին՝ բժշկի օգնականը, - մենք այդ մասին կխոսենք այսօր երեկոյան:

Այդ երեկո Գուլուն և Լիսոն բառաբի մոտ հասան հնազանդ իշուկին հեծած: Երբ Դաուդին երեխաներին օգնեց իջնել իշուկից, կենդանին հանկարծ բարձրացրեց գլուխն ու զռռաց:

- Օհո՜, - ծիծաղեց Տեմբոն, - նա զռռում է զեբրի նման:

- Դե իհարկե, - համաձայնեց Դաուդին, - չէ՞ որ նրանք մոտ ազգականներ են: Դուք դեռ չե՞ք լսել պատմությունն այն մասին, թե ինչպես է զեբրը ստացել իր գծերը: Այդ պատմությունը շատ հին է և մեզ է հասել մի հեռու երկրից:

Փոքրիկ իշուկ Պունդան շատ տխուր էր: Նրա մորթին խղճուկ սև գույն ուներ: Նա նախանձով էր նայում բառաբի մոտ հավաքված մյուս կենդանիներին: «Տվիգա, այ թե երջանիկ ես դու, - ասաց իշուկն ընձուղտին, - քո մորթին ոսկեգույն է՝ մուգ բծերով, ինչպես արևի լույսն ու փշե թփի ստվերը: Իսկ իմը պարզապես սև է:

Հապա մի նայիր առյուծին: Նրա մորթին ոսկեշող - շագանակագույն է, ինչպես դաշտային խոտը: Իսկ փոքրիկ այծքաղի շագանակագույն մորթին նրան վեհանձն գեղեցիկ տեսք է հաղորդում: Իսկ ես պարզապես սև եմ»:

Իշուկը խոր հոգոց հանեց և մերկացրեց իր մեծ ատամները: Գետածի Բուխուն, որ պառկած էր արհեստական լճակում,

ջրի երես հանելով միայն գլուխը, ծռմռեց դեմքը:

«Այ թե ատամներ ունես, Պունդա, - ասաց Բուխուն, - ես քո ատամներից փոշաքաղվեցի: Եվ քո սև մորթու ի՞նչը քեզ դուր չի գալիս: Իմ կարծիքով, շատ օգտակար գույն է, և ուշ կեղտոտվող: Բուխուն ծիծաղ հիշեցնող տարօրինակ ձայն արձակեց: Անակնկալի գալով այծքաղ Դիկ - Դիկը քիչ մնաց ընկներ: Իսկ ահա Պունդա իշուկը, թախծոտ իջեցնելով ականջներն ու պոչը, առաջվա պես դժգոհ տեսք ուներ:

Նա ցանկանում էր բոլորին ցույց տալ, թե ինչ դժբախտ է ինքը. «Իսկ: Դուք զարմանու՞մ եք, որ ես ցանկանում եմ վառ գունավորում ունենալ: Ախ, ինչպես կուզեի...»: Գետածի Բուխուն ռունգերից

պղպջակներ էր թողնում:
«Հը՜մ, մորաքույրս ինձ պատմում էր, - արտասանեց նա, - որ սարերում մի քարանձավ կա, որտեղ նման դեպքերում կարելի է փոխել մորքու գույնը»: Իշուկը բարձրացրեց ականջները. «Այնտեղ կա-

ես վստահ չեմ, որ դա ճիշտ է...»:
Իշուկը պատրաստ էր գնալու այնտեղ: Բայց Բուխուն շարունակում էր. «Մորաքույրն ասում էր, որ անհրաժեշտ է անցնել ժայռի ճեղքով, որը գտնվում է ջրվեժի մոտ և գնալ դեպի քարանձավի խոր-

էր: Նա միայն իր ցանկության մասին էր մտածում:
Իշուկը վազեց ջրամբարի կողքով չնկատելով կոկորդիլոսին: Շտապելով բարձրացավ լեռան լանջը ուշադրություն չդարձնելով բորենի Սրիգիի և շնագայլ

Ծանր շնչելով, Պունդան արագ ասաց. «Խնդրում եմ, ուզում եմ դառնալ սպիտակ»:
- «Սպիտակ... սպիտակ... սպիտակ...» - պատասխանեց արծագանքը: Ավելի վստահ լինելու համար նա ևս մեկ ան-

ռելի է փոխել գույնը»:
Բուխուն մտքերի մեջ խորասուզված ծամում էր ջրաշուշանի տերևները: Իշուկը փայլեցրեց ատամները և սպառնալի արտասանեց. «Եթե չպատմես, ես քեզ աքացի կտամ»: Բուխուն շարժեց գլուխը.

քը, մինչև լույս լուսատիտիկի նման թուլանա:
Այնուհետ անհրաժեշտ է բարձր բղավել: Բայց, Պունդա՛, այդ քարանձավում արձագանքը շատ ուժեղ է: Քո փոխարեն ես...» - «Ի՞նչ է նա ասել, Բուխու: Դե՞: Ի՞նչ

Սլինկիի վրա: Ջրվեժի մոտ նա կանգնեց փնտրելու քարանձավի մուտքը:
Անցք տեսնելով, Պունդան անմիջապես ներս նայեց: «Իա՜», - բացականչեց նա և անմիջապես լսեց պատասխան արձագանքը: Ինչ-որ սև բան դիպավ նրա

գամ բղավեց: Արձագանքն այդ անգամ ևս կրկնեց. «Սպիտակ...սպիտակ...սպիտակ...»: Պունդան շտապեց ետ վերադառնալ, և որքան նա մոտենում էր ելքին, այնքան ավելի ուժգին էր բարախում նրասիրտը:

«Ախ, նման բան չանես: Մորաքրոջս մի անգամ կծել է ավանակը: Դա սարսափելի էր: Ասում են, նա...»: Իշուկը ոտքը գետնին խփեց. «Ուրեմն ի՞նչ կասես այն քարանձավի մասին», - «Այն մութ ու դղրդուն է... Մորաքույրն ասել է... բայց

է պետք անել», - «Ա՜խ, այո՜, դու պետք է ցանկանաս...»:
«Ի՞նչ պետք է ցանկանամ» - չէր համբերում իշուկը: Բուխուն մտածեց. «Դու պետք է ցանկանաս լինել ոչ թե սև, այլ...»:
Սակայն Պունդան արդեն անհետացել

մոուբիկին: Պունդան ետ ցատկեց:
Բայց տեսնելով, որ դա չղջիկ Բուդին էր, թեթևացած շունչ քաշեց: Վախից անգամ իշուկի փորը կծկվեց: Նա դանդաղ մտավ քարանձավ և այնքան գնաց, մինչև մուտքը դարձավ հազիվ տեսանելի:

«Արդյո՞ք ես կդառնամ սպիտակ», - մտածեց իշուկը: Նա շարունակում էր գընալ և շուրջը հետզհետե ավելի լուսավոր էր դառնում, իսկ երբ նա դուրս եկավ քարանձավից, արևի շողերն այնպես կուրացրեցին նրան, որ Պուն-

դան փռշտաց:
Նա նայեց ներքև իր ոտքերին. նախ ձախին, ապա աջին: Դրանք սպիտակ էին դարձել: Իշուկը շրջվեց: Նրա պոչը ևս սպիտակ էր: Իշուկի երազանքը կա-

տարվել էր: Նա սպիտակ էր դարձել: Պունդան ուրախությունից բացականչեց. «Իա՜»: Իշուկը վերադարձավ ջունգլի երջանկությունից փայլելով: Նա սպիտակ և փայլուն էր դարձել: Պուն-

դան գետի մոտ կանգ առավ, որպեսզի ջրի մեջ տեսներ իր արտացոլանքը:
«Հը՜մ, ուրեմն դու, այնուամենայնիվ, գընացի՞ր այնտեղ», - հարցրեց Բուխուն:
«Այո՛», - հպարտորեն պատասխանեց

Պունդան: Հանկարծ հայտնվեց շնագայլը. «Դուք միայն նայեք: Սպիտակ ավանակ: Դա, երևի, կատա՞կ է»:
Պունդան հիացմունքով նայում էր ջրի մեջ իր արտացոլանքին: Այն, ինչ նա տես-

նում էր, ուրախացնում էր իրեն: Բայց այդտեղ լսվեց կոկորդիլոսի ձայնը. «Դու խելամիտ չես վարվել: Սև գույնը քեզ ավելի է սազում»:
Պունդան շարունակում էր հիանալ իրե-

նով ուշադրություն չդարձնելով իր հասցեին հնչող նկատողություններին: Այդ պահին թփերի տակից դուրս եկավ բորենին: Ջունգլին լցվեց նրա ծիծաղով. «Հա՜ հա՜ հա՜, դու այնքան հիմար տեսք ունես»:

«Ճիշտ չէ, - հակառակվեց այծքաղ Դիկ - Դիկը, - դու շատ գեղեցիկ ես, Պունդա»:
Բուխուն սկսեց դանդաղորեն դուրս գալ ջրից. «Հը՜մ, իմ կարծիքով, տեսքդ այնքան էլ վատ չէ»:

Պատահաբար ջրափոսի մեջ մտնելով գետածին կողքին կանգնած իշուկին ոտքից գլուխ ցեխով ողողեց: Բուխուն կանգ առավ իշուկին զննելով և հեգնանքով ասաց.

«Հը՜մ, պետք է ասեմ, որ սպիտակ գույնն այնքան էլ գործածվող գույն չէ քեզ համար: Տես, թե ինչպես է այժմ քեզ վրա երևում ցեխը»: Պունդան մտածմունքի մեջ ընկավ: Նա շփոթված էր:

Իշուկը ցանկանում էր ամեն բան հանգիստ կշռադատել, այդ պատճառով շրջվեց և գնաց անտառ: Նա լսում էր, թե ինչպես բորենի Մբիգին բացականչեց իր ետևից. «Իսկ ոտքերդ հի-

մա միշտ կեղտոտ կլինեն»:
Պունդան նայեց ցած իր ոտքերին: Դրանք ցեխից մոխրագույն էին դարձել: Մտամոլոր նա կանգ առավ ծառի ստվերում. «Իսկ գուցե ավելի լա՞վ կլիներ,

որ ամեն բան առաջվա նման լիներ»:
Այդ պահին նրան մոտեցավ գետածի Բուխուն. «Իսկ դու չե՞ս ցանկանում մորթիդ մաքրել: Ես կարող էի քեզ օգնել, հը՜մ...»: Պունդան թեթևություն զգաց:

Գոհունակությամբ նա սկսեց թավալվել ավազի մեջ, որպեսզի ազատվեր ցեխից: Դա փոքր-ինչ օգնեց, բայց մուգ բծերն ամեն դեպքում մնացին: Բուխուն կողքից հետևում էր իշուկին:

«Իսկ ինչու՞ չես փորձում ցեխը ջրով մաքրել: Այն սովորաբար...»: Սակայն Պունդան արդեն ցատկոտելով հասել էր գետին և սուզվել ջրի մեջ: Ափ դուրս գալով իշուկը թափ տվեց ջուրն իր վրայից:

Կողքովթռչողուրուրը, իշուկինտեսնելով, բացականչեց. «Բծավոր իշուկ»: Շնագայլը արծագանքի պես շարունակեց. «Բծավոր իշուկ»: Բորենին ևս չարախնդալով պաշտպանեց. «Իսկ առաջ,

փնթի, քեզ վրա կեղտը չէր երևում»:
Դիկ-Դիկը մոտեցավ իշուկին և խրախուսելով նկատեց. «Մի հուզվիր, Պունդա: Չէ՞ որ ցեխը միշտ էլ կարելի է մաքրել»: Բայց իշուկը բոլորովին շփոթված

էր և Դիկ-Դիկի քաջալերանքը ականջի հետև գցեց:
Այծքաղը զննեց նրան բոլոր կողմերից և ուրախությամբ ասաց. «Իմ կարծիքով, այս գույնը քեզ շատ էլ սազում է: Ինձ

դուր է գալիս»: Նրան չլսելով, Պունդան, ծանր հոգոց հանելով, կրկին գնաց քարանձավի մոտ:
«Ես պետք է իմանայի, որ ոչինչ չի ստացվի... Ընդհանրապես չարժեր, որ

ես գնայի այդ քարանձավը»: Դիկ-Դիկը լուռ քայլում էր նրա ետևից: Պունդան կանգ առավ և մեծ, տխուր աչքերով նայեց նրան.
«Ախ, եթե ես իմանայի, ինչ անել...», -

«Արի՛, ետ վերադառնանք, - իշուկին համոզում էր այծքաղը, - Ախր դու այնքա՜ն գեղեցիկ ես»: Պունդան կանգնած երկմտում էր: Նրանց առջև սարեր էին:
Իսկ իր մեջքի ետևում իշուկը լսում էր

բորենու ծիծաղը: Տխուր նայելով իր կեղտոտ ոտքերին Պունդան առաջ քայլեց: Դիկ-Դիկը չէր նահանջում, փորձելով համոզել նրան, որ սպիտակ գույնը շատ գեղեցիկ է:

Բայց նրա բոլոր փաստարկների միակ պատասխանը իշուկի սմբակների չըխկչխկոցն էր: Երբ նրանք մոտեցան քարանձավին, այծքաղը փորձեց ետ պահել իշուկին քարանձավ մտնելուց:
Բայց Պունդան մեղմորեն մի կողմն հրեց Դիկ-Դիկին և ներս խցկվեց: Քարանձավի մթությունը վախեցնում էր իշուկին: Նա մտածեց, որ ամեն դեպքում բավականին շատ են փաստարկները լույսի օգտին և սպիտակ մնալու օգտին:
Սակայն, այնուամենայնիվ, Պունդան

ավելի ու ավելի էր խորանում քարանձավում: Շուրջբոլորը սև էր: «Սև», - փնթփնթաց իշուկը: «Սև...սև...սև...» - կրկնեց արձագանքը:
Այդ ժամանակ Պունդան բղավեց ավելի բարձր և հստակ. «Ուզում եմ սև լի-

նել»: Արծագանքը նորից կրկնեց. «Սև... սև...սև...»: Բայց անգամ այդ բառը լսելով, Պունդան գիտեր, որ ցանկանում էր սպիտակ լինել:
Նա վերադարձավ քարանձավի ելքի մոտ: Դրսում պայծառ շողում էր արևը՝ կուրացնելով աչքերը: Պունդան նայեց իր առջևի ոտքերին: Դրանք սև էին: Պոչը ևս:
Դիկ-Դիկը զարմանքով նայում էր իշուկին: Արևը դանդաղ մայր էր մտնում արևմուտքում: Պունդան նստեց և անօգնական հառաչեց. «Իա՜...»: Նա իրոք չգիտեր, թե ինչ էր ցանկանում:
Օրերը հաջորդում էին միմյանց: Ջունգլիներում խոսում էին միայն իշուկի մասին: Որոշները գտնում էին, որ սև գույնը գերադասելի է սպիտակից: Մյուսնե-

րը առավելությունը տալիս էին սպիտակին: Պունդան ցանկանում էր իմանալ յուրաքանչյուրի կարծիքը:
Բայց որքան նա հարցուփորձ էր անում ուրիշներին, այնքան ավելի անհասկանալի էր դառնում իրավիճակն իր համար: Բոլորովին հուսահատված, Պունդան մի անգամ վազում էր ջունգլիով՝ չիմանալով, ինչ վճռել:
Հանկարծ նա հասկացավ, որ հայտնվել է այն նույն քարանձավի մոտ: Նա կրկին ներս խցկվեց, ուշադրություն չդարձնելով ներսից եկող դղրդյունին, և ողջ ուժով բղավեց. «Ուզում եմ լինել սև: Ոչ, սպիտակ»:
«Սև-սպիտակ... սև-սպիտակ... սև-սպիտակ...» - պատասխանեց արծագանքը:
Եվ հանկարծ սարսափելի դղրդյուն լսվեց: Մի հսկայական քար ընկավ ուղիղ իշուկի դիմաց, իսկ մեկ այլ, ավելի փոքր քար՝ նրա մեջքին:
Պունդան շրջվեց և ամբողջ ուժով սլացավ դեպի ելքը: Խցկվելով դուրս գալով քարանձավի անցքից, նա զգում էր, թե ինչպես են ցնցվում պատերն ու թափվում հսկայական քարերը:
Իշուկը դուրս ցատկեց բացատ, իսկ քարանձավն այդ ընթացքում փլվեց և նրա մուտքը փակվեց հավիտյան: Քարանձավից մի քանի քայլ հեռավորության վրա Պունդան կանգնեց և նայեց իրեն. նախ՝ մի ոտքին, հետո՝ մյուս: Սարսափահար նա նայեց նաև իր պոչին: «Օ՜, ոչ: Նման բան չի կարող լինել: - փընթփնթաց Պունդան, - Ախր ես գծավոր եմ դարձել»:

էլիզաբեթը ծափահարեց.

- Ուրեմն նա զեբր դարձավ, որովհետև ոչ մի կերպ չէր կարողանում որոշում կայացնել:

- Ճիշտ է, - գլխով արեց Դաուդին: - Բայց հիշե՛ք. այնուամենայնիվ ինչ-որ պահի որոշումը կայացվեց: Այդ որոշումը Պունդան այլևս չէր կարող փոխել, նա ընտրության հնարավորություն չուներ: Այդ պատճառով, հաջորդ անգամ զեբր տեսնելիս, մտածե՛ք Աստծո Խոսքի մասին: Ով չի կարողանում վճռել՝ իր սրտում ընդունել Քրիստոսին, կամ փորձում է ընկեր լինել և՛ Քրիստոսին, և՛ աշխարհին, նման է զեբրի:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Որոշում կայացրու հետևելու Քրիստոսին և եղիր հետևողական:

Նկարեց
Յուլիա ՊՐԱՎԴՈՒԽԻՆԱՆ

ԾԱՂԿԱՄԱՆՈՎ ԾԱՂԻԿ

Կազմեց Վերա ՆԱՅԴԱՆ

1. Աշխատանքի համար պատրաստի՛ր վարդագույն և դեղին ֆոմ *(փրփրագործվածք) (կարելի է փոխարինել գունավոր ստվարաթղթով)*, մեկանգամյա օգտագործման բաժակ, փրփրապլաստի կտոր, սիզալ, լարանի թել *(տուկի թել)*, ժապավեն, ուլունքներ, թիթեռնիկ, կանաչ թուղթ, նախօրոք կանաչ գույնով ներկված փայտիկ, սոսինձ, մկրատ, մատիտ:

2. Բաժակի վրա սոսինձ քսի՛ր և փաթաթիր լարանի թելով *(տուկի թել)*:

3. Երբ չորանա, բաժակի մեջ դիր փրփրապլաստն ու սիզալը:



4. Պատրաստի՛ր ծաղկի, միջուկի և տերևների ձևանմուշները:

5. Կտրի՛ր ձևվածքները:

6. Դեղին կլորակը սոսնձի՛ր ծաղկին: Տերևները ծալի՛ր:

7. Ցողուն - փայտիկը տնկի՛ր բաժակի մեջ, ծաղիկն ամրացրու ցողունին: Ձեռային աշխատանքը կարելի է զարդարել ժապավենով և ուլունքներով թիթեռնիկով: Մեր աշխատանքը պատրաստ է:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻՆ

- Մայրի՛կ, ինչու՞ են այս կաղամբը կոչում ծաղկակաղամբ, չէ՞ որ այն սպիտակ է, - հարցրեց Սոնան՝ անցնելով շուկայի վաճառասեղանների վրա կոկիկ շարքերով դասավորված ծաղկակաղամբի գլուխների կողքով:

- Որովհետև սովորական կաղամբի դեպքում մենք ուտում ենք տերևները, իսկ այս դեպքում՝ ծաղիկները, - պատասխանեց մայրիկը՝ այդպիսով անչափ զարմացնելով իր իննամյա դստերը: - Ծաղկակաղամբի գլուխը հսկայական ծաղկաբույլ է. դրանում ավելի քան երկու հազար կոկոններ կան: Բայց կաղամբն անպայման անհրաժեշտ է քաղել մինչև կոկոնների բացվելը: Իսկ գիտե՞ս, թե ինչպես էր այն անվանում Մարկ Տվենը. քոլեջն ավարտած կաղամբ:

Սոնան ծիծաղեց, իսկ մայրիկը շարունակեց.

- Իսկ հիմա գուշակիր, թե ամերիկացիները ո՞ր կաղամբն են կոչում համալսարանական կրթությամբ կաղամբ:

- Չգիտեմ: Գուցե բրոկոլի՞ն:

- Կեցցե՛ս, ճիշտ է: Հաշվվում են այդ բանջարեղենի հարյուրից ավելի տեսակներ: Դրանցից մի քանիսը վաճառում են նաև այստեղ՝ շուկայում, օրինակ՝ բրյուսելյան կաղամբը, սավոյան կաղամբը, կարմիր կաղամբը... Սակայն մեզ համար ամենասովորական տեսակը սպիտակ կաղամբն է: Իսկ դու գիտե՞ս, որ կաղամբն այնքան վիտամին C է պարունակում, որքան նարինջն ու կիտրոնը: Երևի մեր օրերում հայտնի որևէ վիտամին չկա, որ հայտնաբերված չլինի կաղամբի գլխի մեջ: Եվ դրանք բոլորը պահպանվում են մեկ տարի շարունակ: Ռուսական խոհանոցի ավանդական ուտեստ թթու կաղամբը վիտամինների կարևոր աղբյուր է ձմռանը: Գերմանական խոհանոցում ևս շատ ընդունված է թթու կաղամբը: «Զաուերկրաուտ» գերմանական անվամբ թթու կաղամբը հայտնի է նաև ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մարդիկ սկսեցին վատ վերաբերվել գերմանական ամեն բանին, այդ պատճառով ամերիկյան վաճառականները փոխեցին դրա անունը և կոչեցին «ազատության կաղամբ»:

Իսկ խոհարարները կաղամբը զուր չեն կոչում բանջարեղենների թագուհի, քանի որ դրանից կարելի է պատրաստել բազմապիսի կերակրատեսակներ և աղցաններ: Շատ հետաքրքիր ազգային բաղադրատոմսեր կան: Օրինակ, ֆիննական խոհանոցում կաղամբը եփում են կաթով, ավելացնելով շաքարավազ, այն դարձնում են համեղ շիլա: Իսկ չինական խոհանոցում կաղամբը սովորաբար տապակում են յուղի մեջ:

Նկարեց Ալեքսանդր ՎՈԼՈՍԵՆԿՈՆ

Կաղամբը խաչածաղկավորների ընտանիքի երկամյա բույս է: Պատկանում է կարեւորագույն բանջարեղենային բույսերի թվին: Ուտելի են տերեւները, որոնք փաթաթվելով յեւավորում են երեք հարյուր գրամից մինչեւ չորս կիլոգրամ մեծությամբ կաղամբի գլուխ:

ԿԱՂԱՄԲ

Շատերը կարծում են, որ կաղամբի գլուխը բույսի պտուղն է: Իրականում դա հսկայական ձմեռող կոկոն է, որը հաջորդ տարի բողբոջելուց հետո պատիճավոր պտուղներ է տալիս, որոնք իրենց մեջ պարունակում են սերմեր: Այդ բազմակողմանի բանջարեղենն օգտագործվում է աշխարհի շատ խոհանոցներում՝ յուրաքանչյուր տանը զբաղեցնելով առաջին տեղերից մեկը:

Կաղամբի պատմությունից

Կաղամբը առաջին բանջարանոցային բույսերից մեկն է, որ աճեցրել է մարդկությունը *(Ք.ա 3-րդ հազարամյակ)*: Կաղամբի հայրենիքը համարվում է Միջերկրյածովյան ավազանը, որտեղ մինչ այժմ հանդիպում են նրա վայրի ազգակիցները: Կաղամբն առաջինը սկսել են մշակել հին իբերները՝ Պիրենեյան թերակղզում: Այնտեղից այն տեղափոխվել է Եգիպտոս, Հունաստան և Հռոմ: Սկզբում օգտագործում էին վայրի տերևավոր կաղամբը, իսկ դրանից ստացել են մի քանի այլ տեսակներ, այդ թվում գլուխ կաղամբը: Իբերներն այն անվանում էին «աշչի»: «Կաղամբ» «капуста» բառն առաջացել է հին հռոմեական «կապուտում» *(գլուխ)* բառից: Այն ժամանակներում դա նրբաճաշակ ուտեստ էր ճանաչված տներում:

Հին հռոմեացիները եւ հույները կաղամբը համարում էին դեղ, որը կարող է բուժել գրեթե բոլոր հիվանդությունները: Այն կարող է հանել գլխացավը, բուժել խլությունը եւ տարբեր ներքին հիվանդություններ, ինչպես նաեւ անխնությունը:

Ռամզես 2-րդի ժամանակների հին Եգիպտոսի բժիշկներն այն արտակարգ օգտակար էին համարում և խորհուրդ էին տալիս ներառել մանկական սննդի մեջ: Մեր թվարկության առաջին դարերում կաղամբ սկսել են մշակել վրացիներն ու հարավային սլավոնները: Այդ բանջարեղենը մշակել են նաև կելտերն ու հին գերմանացիները: Ռուսիայում կաղամբը տարածվել է մոտ 9-րդ դարում՝ Սև ծովի մոտակայքում ապրող հույների միջոցով: 12-րդ դարում այն արդեն մշակում էին Ռուսաստանի գրեթե ողջ տարածքում: Այսօր կաղամբ մշակում են ամենուր, բացի Հեռավոր Հյուսիսից և անապատներից: Մերձարևադարձային երկրներում այն աճում է բարձր լեռնային հատվածներում:

Էլվիրա ՅՈՐՆ

Նավապետ Ջեյմս Կուկը, ով հայտնաբերել է Հավայան կղզիները, այդ հայտնագործության հազողությունը վերագրում էր թթու կաղամբին, որի ամենօրյա օգտագործումը նավաստիներին փրկել է լնդախտից:

Ճապոնիայում կաղամբը գնահատում են ոչ միայն որպես բանջարեղեն, այլեւ որպես դեկորատիվ բույս: Մինչեւ ուշ աշուն պուրակներն ու ծաղկաթմբերը վարդարված են կաղամբի դեկորատիվ տեսակներով, որոնց ներքին տերեւները սպիտակ կամ կարմիր երանգավորում ունեն:

Հեսափրիր փաստեր

Հումորն այն մասին, որ երեխաներին գտնում են կաղամբի միզից, ծնվել է Ֆրանսիայում: Այժմ այն հայտնի է ողջ աշխարհում:

Մովսեսը սովորեցնում է 10 պատվիրանները ժողովրդին

Նարե ՂԱՀԱՐՅԱՆ 5տ.
ք. Երևան



Ալբերտ ԳԵՎՈՐԳՅԱՆ 6տ.
ք. Երևան

Բառեր տրզանակի մեզ

Լրացրու՛ շրջանակները ուղղահայաց և կիմանաս, թե ինչ է գրված վերևի հորիզոնական տողում:

1. Ո՞ր սարի վրա նստեց Նոյան Տապանը: *Ծննդոց 8:4*
2. Գիտուն մարդ, ուսուցիչ, վարդապետ:
3. Ամսագրի անունը:
4. Ով խնդրեց Հիսուսին, որ բժշկի իր աղջկան: *Մարկոս 5:21-23*
5. Աստված, որ երկիրը տվեց Հեսուի ձեռքը: *Հեսու 6:1-3*
6. Եդեմից դուրս եկող III-րդ գետի անունը: *Ծննդոց 2:14*

Կազմեց Նինա ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

18 - 19 էջերի պատասխանները

1. Բարեպաշտ Նոյը

Գուֆան՝ դրա մեջ եղած կենդանիներով 1
Խմիչքով լի սափորը 2
Կաշվե սաղավարտներով և մորթե վերարկուներով զինվորները 3,4,5,6,7,8,9,10
Նոյը 11
Առյուծը 12
Բերք հավաքողները 13,14,15,16,17
Նոյի Կինը 18
Կացինը 19
Նոյի որդիները 20,21,22
Ջրամբարները գետի մոտակայքում 23,24,25,26,27
Ուր քաղաքի թագավորական խաղը 28
Ձիթապտղի քամիչ 29
Նոյի հարսը՝ սափորը ուսին 30
Նոյի հարսները սպիտակեղեն են լվանում 31,32
Ձկնորս տղան 33
Որսորդները 34,35,36
Անբարեխիղճ զինվորը կառքի վրա 37

Սիրելի՛ բարեկամ,

դու կարող ես ուղարկել քո շնորհավորանքը «Արահետ»-ին՝ իր ծննդյան կապակցությամբ:

Քո նամակը կարող ես ուղարկել կամ գրել ներքևում նշված հասցեներով:

Դու կարող ես ուղարկել նաև քո նկարած նկարը:

Լավագույն նկարները տեղ կգտնեն հաջորդ համարներում:

Անա ՄԱԼԻՆՈՎՍԿԱՅԱ
10տ. Ռուսաստան

Էդիկ ՄՈՒՍԵԵՆԿՈՎ
10տ. Ուկրաինա

Արահետ

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» հիմնադրամի մանկական քրիստոնեական ամսագիր:
Լույս է տեսնում տարեկան 6 անգամ

Ռուսերեն լեզվով ամսագիրը հրատարակվում է 1990թ.:
Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, կիրգիզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն լեզուներով: 2018թ.-ից նաև հայերեն լեզվով:

Բաժանվում է կամավոր նվիրատվությունների միջոցով:

Գլխավոր խմբագիր Էլվիրա Յակովլեվնա Տորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Սոնա Մկրտչյան

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ» ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

C. 18-19: © Lion Hudson
C. 22-26: © Paul White Productions

Ռուսերենից թարգմանեց՝ Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Հակոբ Եղիազարյանի

Կազմի առաջին էջի լուսանկարում՝ Մարկ Հարությունյան

© «Լույս Արևելքում», 2018թ.

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

www.lio.ru/tropinka

Դասախոսություններ

Էջ 3: Խաչբառ - ձկնկուլ, լուսան, հովազ: Վճռականություն

Էջ 16: Կարդա համարը. «Տերն իմ լույսն է ու փրկությունը»: *(Սաղ. 27:1)*

Էջ 16: Ստուգիր ինքդ քեզ: 1. Բաղասամ-ավանակ, 2. Դանիել-առյուծ, 3. Դավիթ-ոչխար, 4. Եղիսե-արջ, 5. Եղիա-ագռավ, 6. Հովհաննես Մկրտիչ-մորեխ, 7. Հովնան-կետ, 8. Նոյ-աղավնի, 9. Պողոս-օձ, 10. Սամսոն-աղվես:

Էջ 16: Գուշակիր: Պատմություն՝ Դավիթի ու Գողիաթի մասին:

Էջ 17: Խաչբառ.
Հորիզոնական-1. Հովնան, 3. Սամուել, 5. Հուդա, 6.Զաքարիա, 12. Համբերատարություն, 13. Եգիպտոս, 14. Ղազարոս, 16. Զաքեոս, 17. Սողոմոն:
Ուղղահայաց-2. Աբիմելեք, 4. Արարատ, 7. Նավեյան Հեսու. 8. Բարտիմեոս, 9. Եսթեր, 10. Պսակ, 11. Բենիամին, 12. Դավիթ, 15. Թաբոր:

Էջ 30: Բառեր շրջանակի մեջ:
Ուղղահայաց-1. Ծննդ. 8:4 Արարատ, 2. Ռաբունի, 3. Արահետ, 4. Մարկ. 5:21-23 Հայրոս, 5.Հեսու 6:1-3 Երիքով, 6. Ծննդ. 2:14 Տիգրիս:
Հորիզոնական-ԱՐԱՀԵՏ

Էջ 32: Մուկ-Ձուկ, Մեղու-Բեղու, Այծ-Քարայծ, Հավ-Կաքավ, Հովազ-Վարազ, Ձի-Գետաձի

1 Ա	2 Ր	3 Ա	4 Հ	5 Ե	6 Տ
Ր	Ա	Ր	Ա	Ր	Ի
Ա	Բ	Ա	Յ	Ի	Գ
Ր	Ու	Հ	Ր	Ք	Ր
Ա	Ն	Ե	Ո	Ո	Ի
Տ	Ի	Տ	Ա	Վ	Ա

Ո՞Ր ԲԱՌԵՐՆ ԵՆ ՀԱՆԳԱՎՈՐՎՈՒՄ

Օրինակ՝

Վարդ

Մարդ

Տեղադրեց Հակոբ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

Կենդանիներն ու իրերը
Նկարներում դու գտնի՛ր,
Հանգավորվող անունները
Ձույգերով դասավորի՛ր:







Կազմեց ԱՐԱՀԵՏ ԹԻՄԸ